

ՈՒ ՀԵՌԱՅԱՐ

Ու դուն նորէն հեռացար:
Եւ դուն այնքա՛ն հեռացար
Որ հիմա լոյսը սըրտիդ
Թէ՛ն հոն է, բայց չունի
Իր ջերմութիւնը նախկին:
Կը լըսեմ կանչն հոգիիդ,
Որ կ'աղօտի, կը մարի
Սեմին առջեւ ունկերու:
Բոյրն ըզզըլիսի՜ էութեանդ
Երբ կը հասնի ռունգերու
Միջակ եւ այլ բոյրերու
Շըփոթին վիշտը կ'ապրիմ:
Ու հեռացար, հեռացար.
Մեծ Հըսկուսի գիշերուան
Ձանգին նըման որ հեռուէն
Կը կանչէ մեզ խորհուրդիդ
Գեղեցկութեան, շնորհին,
Բայց որու ձայնն հովերու
Մէջ կորսուած՝ հազիւ թէ
Սըրտիս դըրան կը հասնի:
Ու դուն այսպէս հեռացած
Եւ տակաւին հեռացող
Անվերադարձ քայլերով
Կը հըրես զիս մենութեան
Թախիծին մէջ ու ցուրտին,
Կը թողուս զիս անըստի
Եւ մոլորեալ, վիրաւոր
Քիչ մ'աւելի ամէն օր:

ԱՆԵԼ